



Հակոբ Պարոնյան

Ազգային ջոջեր

ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Այս ջոջին այ ծննդեան թուականը յայտնի չէ իր սկզբունքներուն պէս: Պատմագիրներէն ոմանք 1812-ին կը դրկեն զայն եւ ոմանք 1820-ին. բայց ինքն ոչ մէկն կ'ընդունի եւ ոչ միւսն, 1826-էն անդին շուգեր երթալ: Եթէ ամուսնանալու դիտաւորութիւն ունեցած ըլլար՝ կը զգուշանայինք իր ճիշտ տարիքն հրատարակել. բայց քանի որ լսած ենք, թէ մօտերս վարդապետ ձեռնադրուելու միտք ունի, հանդարտ խղճի կրնանք պնդել, որ Քրիստոստոր Ղազարոսեան, ազգային երիցագոյն երեսփոխան, անձնանուէր դասատու Անձնանուէր ընկերութեան, կէտ առ կէտ գործադրիչ ազգային սահմանադրութեան, վարժապետ եւ ընկեր Ստեփան Փափագեանի, տնօրէն ազգային վարժարաններու, 1816-ին եկած է... Սամաթիա, վասն զի այս թուականին Ղալաթիոյ խորհրդարանը դեռ շինուած չէր:

Իր անունովն քիչ մը Քրիստոսին պատուոյն դպած է, իր սատանայութիւններն մօտէն տեսնողները կ'ըսէին. «Եթէ Քրիստոսին տուրքն այս է՝ պէտք է որ քրիստոնէութիւնը թողունք»:

Մանկութեան առաջին հառաչանքն, կ'ըսէ բարոյագէտ մը, ազատութեան համար է: Քրիստոստորին առաջին հառաչանքը արարողի համար եղաւ, երկրորդ հառաչանքն երեսփոխանութեան համար եւ երրորդ հառաչանքն ազգային գործերէն բնաւ չքաշուելու համար:

Երբ ճեմարանը 1843-ին փակուեցաւ՝ Սամաթիոյ մէջ Սահակեան ընկերութիւն անունով ընկերութիւն մը կազմուեցաւ թաղին վարժարանը յառաջացնելու համար: Այս ընկերութեան մէջ գտնուեցաւ Քրիստոստոր, ուր ոսկերիչ ընկերներուն հետ սկսաւ աշխատիլ եւ իւր կարմիր թաշկինակն իբրեւ ժողովրդական դրօշ պարզել ամիրայութեան դէմ: Յիշեալ վարժարանին ներքին բարեկարգութիւններուն ինքը կը հսկէր, Մինեճի Անդրանիկին թողլով արտաքին յարձակումներուն դէմ մաքառիլը:

1849-ին Փրկիչ դրին գինքը: Հոն մտնելուն պէս՝ շատ բարեկարգութիւններ ըրաւ: Նախ եւ առաջ խենդերն զգաստացնելու համար Թեսալոնիսի բարոյական իմաստասիրութիւնն առաւ եւ անոր մէջէն դաս տալ սկսաւ իրենց: Խենդերն իրենց շղթաներն շարժելով կը խնդային Քրիստոստորին խենդութեանը վրայ անշուշտ եւ Քրիստոստոր կ'ուրախանար եւ ինքնիրեն կ'ըսէր.

«Եթէ չեն զգաստանար՝ գոնէ կը գուարճանան»:

Երկրորդ՝ հիւանդանոցին մէջ գտնուած որբերը սրահի մէջ հաւաքելով՝ Փրկչի որբանոցը հաստատեց. դասատուներ կարգեց եւ ազգային մանկտոյն յառաջադիմութեանը ամէն հոգ եւ խնամք տարաւ, թէպէտեւ իւր յառաջդիմութեան համար ալ գիշեր ցերեկ աշխատելէն ետ չէր կենար:

Երրորդ՝ Հիւանդանոցին տետրակները կարգադրելու ձեռնարկեց. սակայն տոմարակալութեան շատ հնուտ շրջալուծում պատճառաւ՝ տետրակները խաղ խաղացին իրեն եւ սկսաւ բամբաստիլ: Շատերը կ'ըսէին, թէ Քրիստոստորի կոկորդն ալ մայր-հաշի մ'է, հասկցնելու համար, որ շատ հաշիներ փոխանակ տետրակներուն մէջ անցնելու Քրիստոստորին կոկորդն անցած են, բայց ինք, որ օրինաւորութենէ բնաւ չշեղիր, կը պատասխանէր իրենց.

Եթէ ապօրինաւորութիւն կը տեսնաք տետրակներուն մէջ՝ բռնեցէք եւ պատժեցէք... տետրակները:

Չորրորդ՝ ճեմարանին կարասիքը եւ գոյքը հիւանդանոց փոխադրել տուաւ, ճեմարան անունն ալ հոն բերաւ եւ Փրկչի դպրոցն ճեմարան անունն առաւ: Իւր անունը բարձրացնել ուզած ժամանակը՝ վարժարանին անուան բարձրացման

համար այլ անհոգ չմնաց: Բայց միթե վարժարանն այդ մեծ անուան համապատասխանող արդիւնք մը ցոյց տուա՞ւ: Այս կէտը նկատողութեան չառաւ, եւ առնելու այլ պարտաւոր չէր. այսօրուան օրս ո՞ր բանն է այն, որ իր անուան մեծութեանն արժանի արդիւնք մը ցոյց տուած ըլլայ: Մարդերն աւելի մեծ անուն վաստկելու մոլութիւնն ունին, քան թէ մեծ մարդ ըլլալու առաքինութիւնն: Տարեկան բաժանորդագիրը չվճարող մէկը կ'ելնէ լրագիրներու մէջ հրատարակել կու տայ թէ այսինչ վարժարանին լրագիր մը նուիրած է: Չորս սիրական ունեցող օրհորդ մը՝ ուրիշներու խորհուրդ կը հարցունէ, թէ ո՞ր վանքը մտնէ մայրապետ ըլլալու համար: Գրավաճառի մը առջեւէն անցիր եւ գիրքերու անուններ կարդա՛. ի՛նչ մեծ եւ շլացուցիչ անուններ, մարդս ինքզինքն անարժան կը դատէ այնպիսի բարձրանուն գիրքերու ընթերցողն ըլլալ. կը վախնայ գրավաճառին հարցունել անոր գինն, որպէսզի չըստի իրեն՝ թէ դու չես կարողատոր յայտնած բարձր եւ վսեմ գաղափարներն ընթռնել. բաց գիրքը, թղթատէ գայն ու գոցէ. Աղուէսագիրքն անկէ լաւ կը խօսի: Հարուստ մը կը փափաքի առատաձեռն անուամբ կոչուիլ, բայց անմիջապէս կը հանէ հագուստները, անկողնոյն մէջ կը մտնէ եւ հիւանդ կը ձեւանայ, երբ պատուհանէն տեսնէ, որ Սովելոց Յանձնաժողովէն մէկն իր տունը կը հարցունէ դրացոյն: Ուրիշ մը կ'ուզէ մեկենաս ճանչցուիլ եւ աժան գիրք գնելու համար փողոցը պտտող հրէաներուն գամբիւղը կը խառնէ: Ո՞ր մէկը թուեմ եւ ինչո՞ւ ամբաստանեմ Քրիստոստորն, միթէ այսօր թաղային բոլոր զբօսարաններն թաղային վարժարան անունը չունի՞ն:

1853-ին հրաժարեցաւ Փրկչի հոգաբարձութենէն, 1857-ին դարձեալ մտաւ: Ինչո՞ւ ելաւ, ինչո՞ւ մտաւ: Քանի որ մեր մէջ քննութիւն չկայ եւ միշտ պատուաւոր հաշտութիւն կայ, չենք կարող գիտնալ, թէ ինչո՞ւ ելաւ եւ ինչո՞ւ մտաւ, միայն սա կրնանք վկայել, որ քանի մը տարի ետքը Քրիստոստոր էֆենտին իր խղճէն կը տանջուէր, անպատճառ յանցանք մը, մեղք մը գործած ըլլալու էր, որ Անձնանուէր ընկերութեան յարելով՝ ամէն կիրակի Ղալաթիա կ'երթար եւ պանդուխտներուն ձրի դասատւութիւն կ'ընէր: Մինչեւ այսօր, բացի Չատկի կիրակին եւ սահմանադրութեան տարեդարձի օրէն, ամէն կիրակի Ղալաթիա կ'երթայ եւ պանդուխտ եղբայրներուն անձնանուիրութեամբ դասախօսութիւն կ'ընէ: Կ'ուսուցանէ իր աշակերտներուն, թէ մարդս ե՛րբ Միսն պաշտպանելու է եւ Էջմիածինը հարուածելու է եւ ե՛րբ վերջինը գովելով՝ առաջինը պարսաւելու է:

Կը սորվեցնէ նաեւ, թէ ե՛րբ ծափահարելու են գինքն երեսփոխանական ժողովոյ մէջ եւ թէ ե՛րբ ճնշում բանեցնելու են ժողովոյ վրայ: Եւ որովհետեւ այս գիտութիւններն աւելի դիւրաւ կը սորվէին աշակերտներն՝ երեսփոխանական ժողով կու գային եւ իրենց վարժապետը խօսել սկսելուն պէս կը ծափահարէին: Փառասիրութիւնն եթէ խենդութիւն չէ, գոնէ գմեգ երբեմն խենդութեան կը մղէ: Ամէն դերասան, կ'ըսէ, Ժան Ժաք Ռուսո, ծափահարուիլ կ'ուզէ, մեր երեսփոխաններն ինչո՞ւ չունենան այս փափաքն: Ո՛րչափ երեսփոխաններ կը գտնուին, որ օրականով մարդ կը վարձեն ժողովոյ մէջ ծափահարելու համար գիրենք երբ խօսին, երեսփոխաններ, գորս այն ատեն պէտք էր ծափահարել, երբ չեն խօսիր: Որչափ շողոքորթութիւններ, քանի տակառ գինիներ կեցցէ ի մը համար: Ի սկզբան կեցցէ -ներն իրաւ շատ սուղ կը ծախուէին, բայց հիմա, որ այս ապրանքն վաճառողները շատցած են՝ գաւաթ մը օղի չորս կեցցէ ծախու կ'առնուի: Համրն իսկ գաւաթ մը խահուէով պերճախօսութեան մրցանակ կ'առնէ մեր երեսփոխանական ժողովոյ մէջ: Ելնենք սակայն հիմա այս ժողովէն, ուր քիչ մը ետքը պիտի մտնենք:

Քրիստոստոր տնտեսագիտութեան դաս ալ կու տայ իւր աշակերտներուն, սակաւապէտութեան կը հրաւիրէ զանոնք, յորդորելով՝ որ քիչ ծախք ընեն: Հարուստները, կ'ըսէ, եթէ տասը փարայ ով կ'անցնին կամուրջէն, դուք հինգով անցնելու էք, տասը վճարելն ձեզի համար շռայլութիւն կը համարուի: Տնտեսագիտութենէն ետքը բարոյականութեան վրայ կը խօսի, այս դասէն ետքը կու գայ աշխարհագրութիւն, որուն կը յաջորդէ թուաբանութիւն:

Անձնանուիրութեան սահմանն ընդարձակելու կամ սահմանէն անդին անցնելու համար 1867-ին Սեբաստիա մեկնեցաւ եւ շատ գիւղեր ու քաղաքներ շրջելէն ետքը՝ Պոլիս վերադարձաւ: Բոլոր շրջագայած քաղաքներու մէջ Անձնանուիր ընկերութեան նպատակն գործադրել աշխատեցաւ, հետը տանելով գրքեր եւ թուղթեր, որոնցմէ ամենուն կը բաշխէր եւ երբեմն ալ իր ձիուն կու տար, որ անօթութենէն չմարի:

1870-ին երեսփոխան ընտրուեցաւ: Մինչեւ այսօր բացակայ եղած չէ եւ եթէ օր մը ս. պատրիարքն ժողովն Այ-Սթեֆանոս կամ Չաթալջա տանի՝ հոն ալ առաւօտուն կանուխ կ'երթայ եւ ներկայ չգտնուողներուն վրայ օրինաց խստութիւնը

գործադրելու համար առաջարկութիւն մը կը ներկայացունէ: Օրինաց մասին այնքան ճշտութիւն կը պահէ, որ եթէ երեսփոխանին մէկն քովէն իր որպիսութիւնը հարցունէ՝ ամէն հարցում, կ'ըսէ, պէտք է գրատր ըլլայ եւ դիւանին ուղղուի: Ամէն նիստի մէջ խօսք կ'ուզէ եւ կ'առնէ. եւ իր խօսքը չվերջացնէր՝ առանց քուէ առաջարկելու. քուէն իր վերջաբանութիւնն է: Շատ անգամ, որ ատենապետի սով կ'ըլլայ՝ իբրեւ երիցագոյն երեսփոխան՝ ատենապետ կ'ընտրուի:

Աւելորդ է ըսել, թէ սովն քարերէ դիրամարս կերակուր կը շինէ:

Ատենապետութեան աթոռին վրայ բազմելուն պէս՝ զանգակին կը դիմէ: Յայտնի է, որ զանգակին պաշտօնն է ընդհանրապէս լռեցնելու հարկադրել այն երեսփոխանն, որ խնդիրէն կը շեղի եւ ի կարգ չգար. Քրիստոստոր էֆենտին այնքան չարաչար կը գործածէ զանգակն, որ կը հնչեցունէ զայն երեսփոխանին ի կարգ գալէն ետքն ալ եւ կը ստիպէ զմեզ ըսել, թէ զանգակ մ'ալ պէտք է ատենապետին զանգակն ի կարգ հրաւիրելու համար: Ատենապետութեան մէջ խօսք կու տայ միայն անոնց, որոնք իր կուսակցութենէն են, եւ այս եղանակաւ վրէժ կը լուծէ բոլոր այն երեսփոխաններէն, որոնք ժամանակով համարձակած են իրեն կարծեսցը դէմ խօսելու: Քուէի կը դիմէ առանց սպասելու, որ խնդիրը լուսաբանուի, եւ իրատունք ալ ունի, քանի որ քուէն պիտի որոշէ ամէն բան եւ քանի որ ձախակողմեան մը չգիջանի հաւանութեան քուէ տալ աշակողմեանի մը մէկ առաջարկութեան, ի՞նչ հարկ կը մնայ երկու ժամ շատախօսութիւն ընելու: Երեսփոխանութեան որչափ սիրահար ըլլալն ցոյց տալու համար, բաւական կը համարինք հոս յիշել, որ երբ երեսփոխանութենէն ելնել պէտք եղաւ՝ պարզապէս յայտնեց, թէ տեղէն չպիտի երերայ, մինչեւ որ տեղն ուրիշ մը չգայ: Իսկ երբ տեսաւ, որ անպատճառ ելնել հարկ է՝ բոլոր թաղերը պտտելով՝ ոմանց ոտները համբուրելով, ոմանց վերարկուն պագնելով, յաջողեցաւ նորէն երեսփոխան ընտրուիլ: Առաջուան պէս շատ չխօսիր հիմա. նախ՝ անոր համար, որ ատենաբաններն բեմն երթալու են, հոն խօսելու են, եւ ինքն մէկ երկու ժամ ոտքի վրայ կայնիլ չուզեր. եթէ սովորութիւն ըլլար, որ երեսփոխաններն պտտելով ատենաբանէին՝ բնաւ չէր լռեր. երկրորդ՝ անոր համար, որ կարծիքներն հասունցնելու համար այնքան պահած է զանոնք, որ կէսը փտեր է եւ կէսը միայն կրնայ ուտուիլ, եւ ան ալ ծերերէն:

1872-ին Վարչութեան քաղաքական ժողովոյ անդամ եղաւ: Իրեն պաշտած սահմանադրութեան ոգոյն հակառակ՝ ներքին կանոնադրութեամբ եւ իւր կիրքովն մեծ դեր խաղաց Սամաթիան տակնուվրայ ընելով: Քաղաքական ժողովն, որ տասնըչորս անդամներէ բաղկացած էր՝ վեց իջած էր, որոնց մէջ կը գտնուէր նաեւ ինքն եւ մահկանացուներու անձանօթ սահմանադրութեամբ կը վարէր իւր պաշտօնը: Այս մարդն այնչափ անգթաբար տանջեց Սամաթիացիներն, որոնք իրենց վարժարաններուն այս մարդուն շնորհիւ փճանալը տեսնելով, հատուցին իրենց համբերութիւնն, եւ օրինաւորութենէ յուսահատելով ապօրինաւորութեան դիմելու ստիպուեցան, պատրիարքարանի վրայ յարձակելով վար առին գինքն, որ մշեցիներ բերել տուած էր նոյն օրը սամաթիացիները ծեծել տալու համար: Քաղաքական ժողովէն իյնալուն պէս իւր ընկերներովն Խրիմեանի տապալելու գործոյն ձեռք գարկաւ: Այս խնդրոյն մէջ Մինեճի Անդրանիկի ընկերն ծանօթացուց գինքն ազգին, որ շատ աղէկ հասկցաւ, թէ այս մարդն օրինաւորութիւն ըսելով՝ իրեն նարկիլէն կը հասկնար:

1874-ին ելեւնտական հոգաբարձու եղաւ, ինչպէս որ պաշտօնի գլուխ անցան կամ բարձրացան, կամ սուրբ քաղաքին հաշիւները քննելու համար՝ երկու հարիւր ոսկի առին, կամ գողութիւն ըրած ըլլալու համար՝ վանահայր անուանուեցան բոլոր այն անձերն, որոնք մատ ունէին Խրիմեանը գահընկէց ընելու գործոյն մէջ: Կը ցաւինք, որ առիթն միշտ կը ներկայանայ եւ անաշատութիւնն միշտ կը ստիպէ գնեց այս ճշմարտութիւնը կրկնելու: Եօթանասուն հազար դահեկան պարտք ունէր պատրիարքարանն այս թուականին թէպէտեւ չենք յիշեր թուական մը՝ ուր ազգային սնտուկն առնելիք ունենայ: Այս պաշտօնին գլուխ անցնելուն պէս՝ սկսաւ խորհիլ, թէ ի՛նչ հնարք բանեցնելու է վճարել եօթանասուն հազար դահեկանի պարտքն, երբ սնտուկին մէջ եօթ լումայ չկայ: Քանի մ'օր խորհելէն վերջը գտաւ, որ այս պարտքերն ընդհանրապէս կը վճարուին... չվճարուելով. ուստի հրաման տուաւ գանձապետին, որ եթէ պարտատէրները գան եւ դրամ պահանջեն՝ բան մը չխօսին, պատրիարքարանի պաշտօնեաներու ամսական չվճարեն, վերջապէս սնտուկէն դրամ չհանեն դուրս:

Հացագործը հետեւեալ օրը կու գայ գանձապետին.

Բարի լոյս:

Գանձապետը գրով կը գրադուի:

Բարի լոյս:

Գանձապետը մայր հաշիւէն թուղթ մը կը դարձունէ:

Բարի լոյս:

Գանձապետն համր է:

Բարի լոյս, կը պոռայ հացագործը:

...

Մսավաճառը կու գայ.

Բարի լոյս:

...

Նպարավաճառը վագելով կը հասնի.

Ինձի ալ ստակ տուէք այսօր:

Գանձապետը կը ստիպուի յայտնելու, թէ ինքն հրաման ընդունած է դրամի վերաբերեալ խօսքերու մէջ չմտնել:

Պարտատէրերը քիչ մը կը պոռան: Եղելութիւնը կ'իմանայ Քրիստոստուր Էֆենտին, որ կը յայտնէ իրենց, թէ առանց ժողովոյ հրամանին, գանձապետը ստակ չկրնար տալ:

Ժողովն ե՞րբ հրաման պիտի տայ, որ վճարուի:

Երբ որ գումարուի:

Ե՞րբ կը գումարուի:

Երբ գումարման պէտքն զգացուի:

Ե՞րբ կը զգացուի այս պէտքը:

Երբ հրաւեր դրկուի:

Ե՞րբ կը դրկուի հրաւերը:

Երբ որ հրաւիրագրերը գրուին:

Ե՞րբ կը գրուին:

Երբ զանոնք գրող պաշտօնեային ամսականը վճարուի:

Ե՞րբ կը վճարուի:

Երբ սնտուկին մէջ ստակ գտնուի:

Այս կտրուկ պատասխաններով պարտատէրերուն պատկառանք ազդելէն ետքը զգաց՝ թէ բնաւ բան չվճարելն անկարելի է. ուստի սկսաւ երբեմն փոքրիկ, երբեմն մեծ գումար մը զեղչելով, երբեմն ալ բոլորովին զեղչելով՝ զանոնք գոհացնել: Միւս կողմէն աւելորդ պաշտօնեաներուն, ինչպէս նաեւ պատրիարքարանի ձիերուն, ճամբայ տուաւ: Ահա այս էր ծրագիրն, որով եօթանասուն հազար դահեկան պարտքը վճարելէն ետքը՝ յաջորդներուն թողուց, որ նորէն երկու հարիւր ութսուն հազար դահեկան պարտք գոյացնեն, եւ 1877-ին նորէն ելեւմտական հոգաբարձութեան կոչուի այդ պարտքն ալ սրբելու համար: Պէտք է հոս յիշել, թէ կնճռոտ հաշիւներու մէջ սրբած է շատ պարտքեր, որոնք յաջորդ ելեւմտականի օրով վճարուած են: Այսուամենայնիւ, իր կարողութեանը չափ ծառայած է ազգին այս ճիւղին մէջ, ուր յաջողելու համար մարդս ճարպիկութիւն ունենալու է պարտք չվճարելու:

Այս պաշտօնէն հրաժարելէն ետքը՝ Քրիստոստուր Էֆենտի սկսաւ արձակ համարձակ ազգին չարիք հասցունել, եւ չարիք հասցունելուն համար ալ

ամսական առնել: Նախ՝ Իսկիտարու ս. Կարապետի վարժարանին մէջ տեսչութեան պաշտօն ստանձնեց, քիչ մը ետքը Սուրբ Խաչի դպրոցին մէջ եւ ետքն ալ Իճիտիէ, Կարակեօմբուկ եւ այլն: Այս յանգանքն մեծ էր, որովհետեւ յայտնապէս կը գործէր եւ ամսականով: Յիշեալ թաղերու թաղականներն իրմէ աւելի յանգանք ունէին, գործելու ստիպելով զինքն այնպիսի պաշտօնի մը մէջ, որուն բոլորովին անծանօթ է: Մարդս իր սահմանէն դուրս անգիտութեամբ աւելի վնաս կը հասցունէ, քան իր սահմանին մէջ՝ գիտութեամբ:

Քրիստոստուր Էֆենտին ազգին բարիք ալ ըրած է, չարիք ալ հասցուցած է իբրեւ սխալական մարդ: Անձնանուէր ընկերութեան մէջ մեծ ծառայութիւն ըրած է մեր պանդուխտ եղբայրներուն դասախօսութիւն ընելով. բայց ասկէ աւելի մեծ ծառայութիւն մ'ալ ըրած է, որ անուրանալի է, եւ որուն համար ազգն իրեն երախտապարտ է, եւ այս մեծ ծառայութիւնն ալ սա է, որ ամուսնացած չէ եւ գաւակ չունի: Ազնուապետութեան թշնամի է, թէպէտ եւ ժողովրդեան ալ շատ բարեկամ չէ: Իւր կիրքերն այնչափ ծայրայեղութեան կը տանին զինքն, որ մէկ անձէ վրէժ լուծելու համար այն անձին բնակած քաղաքը կրակի կու տայ, եւ իր նարկիլէ ին յարմար կրակ կը փնտռէ այնտեղը:

Նհիար կազմով, միջին հասակով, ճերմակ մազերով մարդ մ'է Քրիստոստուր Էֆենտին: Մօրուքը մտքին պէս է, կարճ է: Ձմեռն այնչափ զգեստ կը հագնի իրարու վրայ, որ կասկած կու տայ ծխախոտի վարչութեան պաշտօնեաներուն, որոնք իրեն ծոցը կը խուզարկեն ծխախոտ գտնելու համար, բայց Ընդհանուր ժողովոյ ատենագրութիւններէն ուրիշ բան չեն գտներ: Ինքը պճնասէր չէ եւ շատ անգամ այնչափ անկանոն կերպով կը հագուի, որ եթէ արտի մը մէջ գտնուի՝ խրտուիլակ կը կարծուի: Եթէ կան փափաքողներ զինքը ճանաչելու, կը հրաւիրուին յիշել դէմքն այն մարդուն, որ ստիպողական գործ մ'ունենալով իր երթալիք տեղը շուտ հասնելու համար՝ իր չգիտցած մէկ փողոցին մէջ կը մտնէ եւ հինգ հարիւր քայլ առնելէն ետքը կը տեսնէ, որ այդ փողոցն անել է: